



ԲԱՆՈՍԻՐԱԿԱՆ

## ՀԱՅՈՑ ԲԱԺԱՆՈՒՄՆ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻԷՆ

(Շարունակութիւն, տես Բազմավէպ 1927, էջ 288)

Գ. — ԻՆՁՈՒ ԶԱՏՈՒԵՑԱՆ ՀԱՅՔ

Մինչև ցարդ մեր խօսածներէն յայտնի է՝ որ բաժանման պատճառը քաղկեզոնեան վարդապետութիւնն եղաւ։ Եւ եթէ մեր հետագայ ամբողջ մատենագրութիւնն աչքէ անցընենք, միշտ պիտի հանդիպինք նոյն նախանձայուզութեան՝ չհեռանալու ուղղափառ դաւանութենէն, ուսկից կը համարէին թէ օտարացուց Գաղկեղոն բոլոր քրիստոնէութիւնը. և զոր չեն կարող յիշել մերոնք՝ առանց արձակելու լուսանք մը նոյն ժողովին դէմ։ Մեծապէս կը սխալին անոնք՝ որ Հայոց անջատման մէջ արդի մտածութեամբ կ'որոնեն ուրիշ քաղաքական պատճառներ, զորս նոյն ինքն բաժանողը կ'անգիտանային։ Որով մեզ կը քնայ քննել հոս բուն պատճառը, քաղկեղոնեան վարդապետութեան իսկութիւնը,

զոր մեր ազգայիններէն յոյժ շատեր և նոյն իսկ գիտնականի համբաւ վայելողներ ցարդ իսկ չեն ըմբռնած, և ճշդէլ մեր բաժանողաց համոզումներն անոր մասին։

1. Դ՛սիեզ. ժողովոյն վարդապետութեան ապահովագրոյն՝ և մանաւանդ միակ աղբիւր՝ նոյն սրենհոգոսին թողած գրաւոր դաւանութիւնն է։ Զայն լաւ հասկնալու համար՝ նկատելու ենք Բանին Աստուծոյ մարդեղութեան մասին յայտնուած թիւր կարծիքները, որոց գլխաւորը չորս են։ Արիոսին, որ գլխաւոր արարած համարեցաւ ի յաւիտենից, խոնարհագոյն քան զՀայր, և ոչ իսկապէս Աստուած. և դատապարտուեցաւ Նիկիոյ ժողովէն, որ ըզ-Բանը սահմանեց՝ «Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ և ոչ արարած, համագոյ Հօր»։ Երևութականաց կարծիքը, որոնք Փրկչին մարդեղութիւնն



ու չարչարանքն առ աչօք կը համարէին և ոչ իսկական. և որոց դէմ նիկէական հանգանակն ըսաւ. «որ վասն մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան էջ և մարմնացաւ, չարչարեցաւ և յարեաւ»։ Նեատորի վարդապետութիւնը, որ Քրիստոսի մէջ աստուածութիւնը բաժնեց մարդկութենէն՝ բնութեամբ և անձնաւորապէս, բարոյական կապ մը միայն դնելով երկու բնութեանց միջև, և ի Մարիամայ ծնեալը սուկ մարդ համարելով. և զոր դատապարտեց Եփեսոսի ժողովը, վճռելով անխախտ պահել Նիկիոյ հանգանակը՝ որ ճշդած էր հաւատոյ սահմանը, Նեատորի գլխաւոր ախոյեանն էր Կիրակո աղեքսանդրեայ, որոյ վկայութիւնը պիտի լսենք յետոյ։ Եւ հուսկ Եւտիգեայի համոզումը, որ Յիսուսի մէջ մարդկութիւնն ընկղմած ու կորսուած վարդապետեց աստուածութեան մէջ, և անոր ընծայեց մի թնոթիւն աստուածային. որոյ դէմ ճակատեցաւ Քաղկեդոնի ժողովը, հերքելով միանգամայն միւս խոտոր կարծիքներն ալ։

2. Յառաջ կը բերեմ հոս նոյն ժողովի վարդապետութեան կարեւորագոյն մասը, բառական թարգմանութեամբ բնագրէն։ «Զի այնոցիկ՝ ոյք յերկուս որդիս զտընտեսութեանն խորհուրդ բաժանել ջանան (նեստորականք), հակառակի (ժողովս). և զորս չարչարելի զմիմանին աստուածութիւն ասել իշխեն (եւտիգեանք), մերժէ ի սուրբ Եկեղեցւոյ. և որոց յերկուս բնութիւնս Քրիստոսի խառնակութիւն կամ շփոթումն կարծեն (նոյնեքը), ընդդիմանայ. և զորս երկնային կամ յայլմէ գոյացութենէ բարանջնեց զառի մէջնն ստեալ զկերպարանս ծառայի (վաղենտինեանք և նոյնեքը), արտաքսէ. և որք նախ քան զմիութիւնն երկուս բնութիւնս Տեառն առասպելեն, և յետ միութեանն մի բնութիւն ստեղծանեն (եւտիգեանք), նշովէ Սրբ մեք ամենեցին զհետ երթեալ սրբոց հարցն, մի և նոյն որդի վարդապետեմք միարանութեամբ գտէք մեր Յիսուս Քրիստոս»։

տոս, զնոյն կատարեալ յաստուածութեան և զնոյն կատարեալ ի մարդկութեան. զնոյն Աստուած ճշմարիտ և մարդ ճշմարիտ, ի հոգւոյ բանաւորէ և ի մարմնոյ, համարուն Հօր ըստ աստուածութեանն, և համարուն մեզ ըստ մարդկութեանն. ամենին նման մեզ՝ րաց ի մեղաց. նախ քան զյաւիտեանս ի Հօրէ ծնեալ ըստ աստուածութեանն, իսկ ի վերջին աւուրս նոյն վասն մեր և յաղագս մերոյ փրկութեան (ծնեալ) յաստուածածին կուսէն Մարիամայ ըստ մարդկութեանն. զմի և զնոյն Քրիստոս՝ որդի, տէր, միածին, յերկուս թնոթիւնս (ἐν δύο φύσεσιν) անշփոս՝ անկոփոխ՝ անբաժան՝ անհեղատս ձանաչելք, ըսաւ զբնութեանցն զանազանութիւն ոչ եղծեալ վասն միութեանն, այլ մանաւանդ պահեալք սկսականքն երկոցունց բնութեանց. և ի մի դէմս (πρόσωπον = անձն) և յինքնութեան (ὁπ' ὅσους) միարանեալք. ոչ յերկուս դէմս (անձինս) անշատեալ կամ քաժսեալ. այլ մի և նոյն որդի և միածին, Աստուած Բան, տէր Յիսուս Քրիստոս» և այլն։ Համառոտիւ՝ երկու անշփոս և անբաժանելի բնութիւնք մի անձի մէջ, որով մի որդի և մի տէր Յիսուս, կատարեալ Աստուած և կատարեալ մարդ միանգամայն։

Այս յօդուածին զիտակից աչքով նայող՝ չէ կարող երեւակայել քան զայս լուսաւոր, նուրբ և խոր վարդապետութիւն, յորում կը խօսի Աթմանսներու, Նազիանզացիներու և Կիւրեղներու ներքնաշարհի հելլենական իմաստասէր և աստուածաբանի թնութիւնք մի անձի մէջ, ու ներդաշնակօրէն կը զուգորի Լեոն պապին առ Փլաբիանոս զեղեցիկ թուղթը կամ տումարն ալ, որոյ վրայ հիմնեցաւ նոյն ժողովը, և որ երկու անգամ հայերէն ևս թարգմանուած է։

3. Այդ դաւանութեան մէջ՝ մեր բաժանեալ կուսակցութիւնը զայթակեցնող կէտն էր «յերկուս թնոթիւնս» սահմանը, որով ժողովը կ'իմանար աստուածային ու

1. Mansi, VII. 107. Vacaut, II, 2194. Պատ.

ժող. 810-11. — 2. Վանեակի, 1805. Պատ. ժող. 244.

մարդկային գոյացութիւններն ի Բրիտանոս, Զարափա՛ն էր այդ՝ Եկեղեցւոյ վարդապետութեան առջև, Ոչ. և զայս շատ դիւրաւ կրնանք ցոյցնել, ճշդելով նախ «բնութիւն» բառին իմաստասիրական սահմանը՝ նոյն դարու իմացաւածով իսկ, որ այժմ ալ դեռ նոյն է։ Ամէն բանաւոր էակ ունի իւր մէջ անձն (πρόσωπον—personne), որ կը նշանակէ նոյն ինքն էակն ամբողջութեամբ, նկատուած իբր միութիւն մը, և յատուկ է անհատին. զոր օրինակ, «չարիքն որք լինի՝ անձինք ինչ իցեն, թէ արգասիք անձանց՝»։ Դարձեալ ամէն էակ կամ անձն ունի իւր բնութիւնը (φύσις—nature), որ կը նշանակէ անոր իսկուութիւնը կամ ինչ որ է ի բնէ (մարդ, փայտ, քար), և սեպհական է ամբողջ տեսակին. զոր օրինակ՝ «զորս իւրեանց իսկ բնութեան բարքն կշտամբեն»։ Իսկ ամէն բնութիւն ունի իւր սեպհական յատկութիւնը (ιδιότης—propriété) կամ որոյիտութիւնը (ποιότης—qualité)։

Արդ՝ Բրիտանոսի մէջ կար աստուածային անձն, ուրեմն նաև աստուածային բնութիւնը. կային մարդկային մարմինն ու հոգին ալ, ուրեմն նաև մարդկային բնութիւնը, որ ազդեցով կը կազմուի իսկ այդ կրկին բնութեանց միութիւնն երեք կերպով կրնայ մտածուիլ. կամ անձնաւորապէս անջատ իրարմէ, սուտի երկու անձինք և երկու բնութիւնը՝ բարոյապէս միայն միացեալք իրարու, ինչպէս խորհեցաւ Նեստոր խոտորնակիւ։ Կամ մարդկային բնութիւնն ալափոխուած և ընկերդմած անփոփոխելի աստուածութեան մէջ և կազմած մի անձն ու մի բնութիւն՝ ըստ Եւտրեմայ։ Եւ կամ աստուածային ու մարդկային բնութիւնք անեղծ մնացած ու միացած մէկ անձն մէջ, առանց շփոթուելու և անջատուելու իրարմէ, ինչպէս Քաղկեդոն վարդապետեց ուղղափառապէս։ Այս վերջին սեկնութիւնն ստիպողական է. վասն զի եթէ ի Բրիտանոս կար կա-

տարեալ աստուածութիւն և կատարեալ մարդկութիւն, և այս երկուքը չէին կարող երկու անձանց վրայ հիմնուիլ, ուրեմն հարկ էր՝ որ հաստատուէին երկու բնութեանց վրայ։ Իսկ երբ աստուածութիւն և մարդկութիւն կը կեդրոնացնենք մի բնութեան մէջ, հարկ կը լինի հետեցնել՝ թէ երկու բնութիւնք խառնուելով՝ երրորդ մը կազմեցին, քնատով ու խանգարմամբ անոնց միոյն, և բնականապէս տկարին, մարդկայինն. և կ'երթանք եւտրեմականութեան։ Երկու սահմանքս, «կատարեալ Աստուած և կատարեալ մարդ», և «մի բնութիւն», իրարու կը հակասեն, կը հերքեն զիրար. այլ կամ երկու բնութիւնք, և կամ եղծուին մարդկային բնութեան։

Եւ վերջապէս՝ ամէն յատկութիւն իւր բնութիւնը կը պահանջէ, և երկու տարբեր բնութեանց յատկութիւնք չեն կարող միասին կենալ միակ բնութեան մը վրայ. զոր օրինակ՝ ջուրը չէ կարող թէ ջուր և թէ իւր լինել միանգամայն. այլ ջրի յատկութիւնը ջրի վրայ, և իւրին՝ իւրի վրայ միայն կրնան կենալ, իսկ արդ ի Բրիտանոս կային իրապէս երկու յատկութիւնք, առատուածային ու մարդկային, ուրեմն ստիպողաբար երկու բնութիւնք ալ կային, առանց որոց յատկութիւնք երևութական պիտի լինէին և ոչ իրական։ Այս է փոխադասութեան և ողջմտութեան ուսումը, որոյ վրայ հիմնուելով Քաղկեդոն, վարդապետեց երկու բնութիւն ի մի անձին Բրիտանոսի։

4. Քաղկեդոնեան վարդապետութեանդ ազդեւն էր Աւետարանը, և ինքն Յիսուս իւր անսոստ բերանով ցոյց տուաւ բնութեանց երկուութիւնն իւր անձին մէջ, ըսելով. «Եւ և Հայր իմ մի եմք», ակնարկելով աստուածային բնութեան. և թէ «Հայր իմ մեծ է քան զիս», ակնարկելով մարդկային բնութեան։ Եւ դարձեալ կուչելով ինք զինքը մերթ «որդի Աստուծոյ» և մերթ «որդի մարդոյ»։ Հակասական և

1. Եզեհի՝ 27. — 2. Նոյն՝ 202. — 3. Յովհ. ԺԳ, 80. — 4. Յովհ. ԺԳ, 28. — 5. Մատթ. ԻԶ, 63. Յովհ.

Թ, 35. — 6. Մատթ. Ը, 20. Թ, 6 ևն.

անտեղի պիտի լինէր՝ որ Յիսուս մի բնու-  
թեամբ թէ որդի Աստուծոյ և հաւասար  
Հօր լինէր, և թէ որդի մարդու և փոքր  
քան զՀայր: Անով որ ազոնց մին էր,  
միւսը չէր կարող լինել. իսկ եթէ երկուքն  
ալ էր և «մի որդի», ապա երկու բնութիւն  
ունէր մէկ անձին մէջ:

Եւ որովհետեւ «Աստուած էր Բանն»,  
և «Բանն մարմին եղև և բնակեաց ի մեզ՝»,  
և ասոր համար «պարտ իսկ էր նմա ա-  
մենայնիւ եղբարց նմանել», մեզ նման առ-  
նելով՝ «Հոգի, մարմին և միտք» ըստ  
սովորական հանգանակին, այդ մարդկա-  
յին բանաւոր հոգին ու միտքը կը պա-  
հանջէին նաև մարդկային կամքը. որով  
կային ի Գրիստոս երկու կամք, աստուա-  
ծային ու մարդկային, վերջինս հպատակ  
ու հետևող առաջնոյն: Չայս դարձեալ  
Յիսուս է հաստատողը, ըսելով. «Իջի ես  
յերկնից՝ ոչ զի զկամս իմ արարից, այլ  
զկամս այնորիկ որ առաքեալց զիս»: Թէ  
«Ոչ խնդրեմ զկամս իմ, այլ զկամս այնու-  
րիկ՝ որ առաքեալց զիս»<sup>1</sup>. և դարձեալ՝  
«Ոչ իմ կամք՝ այլ քոյդ լիցին»<sup>2</sup>, կ'ը-  
սէր Հօրը: Իբրև Աստուած՝ Հօրէն տա-  
րեր կամք չէր կարող ունենալ. որովհե-  
տեւ Աստուածութեան մէջ «երեք կատա-  
րեալ անձինք, մի կատարեալ կաճք»<sup>3</sup> դա-  
ւանած է միշտ Եկեղեցին: Հետևաբար  
մարդկային կամքն էր՝ որ կը զանազան-  
ներ Հօր և Բանին համահաւասար կամ-  
քէն: Երկու կամաց հետ կային ի Գը-  
րիստոս նաև երկու ներգործութիւնք կամ  
գործեր, մարդկային և աստուածային.  
միով կը մարդանար՝ մեռնելու և փրկելու  
համար մարդկային ազգը, և միւսով ա-  
րիւն կը քրտնէր ի տես վերահաս մա-  
հաւան, ուսկից կը խորշէր մարդուն բնու-  
թիւնը. և կը բաղձար՝ «եթէ հնար է»<sup>4</sup>  
զերծանել անտի, միանգամայն վկայելով՝  
թէ «Տրտում է ոգի իմ մինչև ի մահ»<sup>5</sup>.  
Եթէ Յիսուս իւր անձին մէջ կամաց  
ու ներգործութեանց այս ակնյայտի զա-

նազանութիւնը կը զնէ, ուրեմն աղով  
զարձեալ կը հաստատէ երկուց բնութեանց  
զոյութիւնը իւր մէջ. Եւ եթէ ներքին է  
կարծել՝ թէ նա ինք զինքն աւելի լաւ  
կը ճանաչէր քան մեր բոլոր հակաքաղ-  
կեղոն աստուածաբանները, ուրեմն պէտք  
է ընդունինք՝ թէ Դ տիեզ. ժողովը դաւա-  
նելով երկու բնութիւն ի Գրիստոս, պար-  
զապէս հետեւեալ Աւետարանի վարդա-  
պետութեան. և այդ իսկ եղաւ իւր եր-  
ջանիկ մոլորոտիւնը: Նոյն աղբիւրէն խմեց  
նաև Լևոն՝ ներգործութեանց հետեւեալ  
զանազանութեանը մէջ. «Փաղցնուլ, ծա-  
րուել, վաստակել և ի քուն լինել՝ յայտ-  
նապէս մարդկօրեան իմեւ եւ Այլ հինգ հացիւ  
զհինգ հազարս մարդկան յագեցուցանել,  
և տալ կնոջն շամբարացոյ զլուրն կեն-  
դանի, որոյ արքունի չտայ՝ որում ըմպէրն՝  
միւսանգամ ծարաւել, ի վերայ մկանանց  
ժովուն ցամաքաւ գնալ, և սաստիկով՝  
մորկին՝ ջահառնացեալ ալիսն ցածուցանել՝  
առանց երկմտութեան աստուածական եւ»,  
Նոյն զանազանութիւնը կատարեց յետոյ  
նաև Մանազկերտի ժողովը, մեծախոհ  
ԹՆ. Իմաստասիրի նախագահութեան ներ-  
քև, գրելով այսպէս. «Արար նշանս ըստ  
աստուածութեան, և անցաւ իրբև զմեզ  
հասակաւ ըստ մարմնոյ... վաստակեցաւ  
յուզեզնացութեան և ննջեաց որպէս մարդ  
որ, մինչդեռ յաստուածութեան իրոտմ ոչ  
վաստակի և ոչ ի քուն լինի նա՝ որ ան-  
քուն ակամբ պահէ զխորայէլ: Չարչարե-  
ցաւ և մեռաւ նշմարտապէս ի չարչարելի  
մարմնի նա՝ որ ըստ ընտրեան իրոտմ իր-  
բև Աստուած ի վեր է քան զցաւս»<sup>6</sup>:

Նոյն անձն է որ կը գործէ այդ ամէնը.  
բայց մէկ մասը մարդկային բնութեամբ  
և միւսն աստուածայնով: Օրինակ մը, թէ և  
ոչ հաւասար՝ բայց մերձաւոր, Միք մարդ-  
կային անձին մէջ ունինք նոյնպէս եր-  
կուութիւն մը, հոգի և մարմին, որոնք  
թէպէտ սերտիւ միացեալ, բայց և այնպէս  
իրարու հետ չենք շփոթիր, այլ կը նկա-

1. ԹԿ. Ա, 1, 14. — 2. Երբ. Բ, 17. — 3. ԹԿԵ.  
Ձ, 88. Ե, 30. — 4. ԳԿ. ԻԲ, 42. — 5. ԱԳԹ.

270. — 6. ՄԹ. ԻԶ, 38, 39. — 7. ՏԵր ՄԻԽԱՍ.  
196-97.

տենը զանոնք թէ անշատ ըստ տեսակի  
և թէ միացեալ անձնաւորացէս. և որոյ  
համար Եզնիկ կրնար ըսել՝ թէ «մարդիկ  
յերկոց թնութեանց (այսինքն տեսակաց)  
են, ի մարմնաւորաց և յանրամիտոց՝»։  
Միտքզաւայն այդ երկուքին գործերն ալ  
կը զանազանենք. խորհիլ, ճանաչել, տրա-  
մարանել՝ հոգւոյն կու տանք. մնանիլ,  
հիւանդանալ, մեռնիլ՝ մարմնոյն. և միոյն  
գործերը միւսին չեն, բայց բոլորն ալ  
անձին են. Արդ՝ եթէ մեք իրաւունք ու-  
նինք այս զանազանութիւնը զննելու մար-  
դուն մէջ, ինչո՞ւ Քաղկեդոնի ժողովը չկա-  
րենար ընել նոյնը յանձին Փրկչին. ինչ-  
պէս մերս Յովնաննէս կթղ. զարեղենացին  
ալ ըրաւ, ըսելով. «իսկապէս մարդ մի-  
անգամայն և Աստուած խոստովանիմք՝  
և երկրպագեմք՝ հանդերձ աստուածութեամբ  
զմարմնատրոսութիւն, և հանդերձ մարմնա-  
տրոսութեամբ զաստուածութեան»։ և Շնոր-  
հալին աւելի յայտնի բառերով, թէ «Մե-  
րով թնութեանս մեռանի», և աստուա-  
ծայնոյն՝ «Աստուած անմահ խոստովանի»։

Ե. Այս խորհրդածութիւններէն վերջ,  
դիւրին է հետեցնել՝ թէ Տէր Մկրտչեան  
անձին ու բնութեան ճշգրիտ սահմանե-  
րուն տեղեակ լինելու չէր, որպէս զի  
կարենար գրել՝ թէ «մեր մտքի համար  
անբարոյնի է առանձին առանձին բնու-  
թիւններ՝ առանց անձնաւորեալ կերպա-  
ւորութեան, կամ մի անձն՝ որ երկու  
ներգործութիւն և երկու կամք ունի. ուս-  
տի և բնութիւններէ բաժանումն ակամայ  
դէպ ի անձերի բաժանումն պէտք է տա-  
նի»։ Յետ դաւանելու զՔրիստոս կառա-  
րեալ Աստուած և կատարեալ մարդ, այս  
դիտողութիւնն անսահի կը դառնայ. կա-  
տարեալ աստուածութիւնը կը պահանջէ  
անոր մէջ աստուածային կամք ու գործ.  
Իսկ կատարեալ մարդկութիւնը, կազմուած  
մարդկային մարմնէն ու բանաւոր հոգիէն,  
կը պահանջէ մարդկային կամք ու գործ,  
առանց որոց բանաւոր չէր լիներ հոգին.  
Այդ կրկին կամքն ու գործեր, որոնք ի-

րապէս կային ի Քրիստոս, երկու անձանց  
չենք կարող վերագրել Նիստորի հետ,  
ուրեմն երկու թնութեանց ընծայելու ենք.  
զի մէկ բնութիւնն՝ ըսինք՝ չէր կարող եր-  
կու բնութեանց յատկութիւններն ունենալ.  
Եւ ցորչափ երկու տարբեր բնութեանց  
տարբերը կան ու կը մնան ի Քրիստոս,  
«անձերի բաժանման» կարծեցեալ երկու-  
ղը չի փարատիր և ոչ մի թնութեամբ,  
որ մեր պարագային անիմատ բառ մ'է  
միայն. Այդ վտանգէն կրնայ ազատել լոկ  
կաթողիկէայ սահմանը՝ թէ մարդկային  
հոգին ու մարմինն ուղղակի չեն միացած  
իրարու հետ, որով մարդկային անձ մ'ալ  
պիտի կազմէին՝ աստուածայնէն զատ, ալ  
միջնորդութեամբ Բանին, որոյ հետ մէկ  
անձ կը յօրինեն, աստուածայինը՝ երկու  
բնութեամբ։

«Մարդու մէջ, կը շարունակէր նոյն  
համալսարանական վարդապետը, նոյնպէս  
հոգին ու մարմինը իրեն երկու տարբեր  
բնութիւններ միացած են իրար հետ. բայց  
ոչ ոքի մտքից չէ անցնում՝ թէ մարդ եր-  
կու բնութիւն կամ երկու կամք և ներ-  
գործութիւն ունի, մարմնական և հոգեղէն.  
և ուրեմն Քրիստոս, իբրեւ կատարեալ Աս-  
տուած և կատարեալ մարդ, երեք բնու-  
թիւն, աստուածային, հոգեկան և մար-  
մնական»։ և կրկին կը շեշտէր՝ թէ «բնու-  
թեան» սահմանն անձնութ չէր իրեն.  
Մարդկային հոգին ու մարմինը իրարմէ  
անշատ նկատուած, կամ իրապէս ալ բաժ-  
նուած մահուամբ, թնութիւն չեն կազմեր,  
ոչ մէկ, ոչ երկու. ալ սոսկ մարդկային  
հոգի և մարդկային մարմին. վասն զի  
թնութիւնը կը պահանջէ՝ բնական էակին  
տեսակը կազմող տարրերաց համալսման.  
Թիւնը Հետեւաբար Քրիստոսի մէջ մարդ-  
կային հոգին ու մարմինը միացեալ՝ միակ  
մարդկային բնութիւն մը կրնային կազ-  
մել. Նմանապէս աստուածութիւնն ալ, որ  
ամբողջ էր անոր մէջ, ունէր աստուածա-  
յին բնութիւնը. Որով հարկաւոր էր՝ որ  
լինէին երկու թնութիւնք, և ոչ թէ մի

կամ երեք, որոնք հաւասարապէս անտեղի են:

Այս ըսածներովս պատասխանած կը լինիմ նաեւ Տէր Միքէիեանի առարկութեանց՝ որոց մէջ ջանաց՝ որ գիտութիւն ու տրամաբանութիւն բաժին չունենան բնաւ:

6. Առոնց քով չէր կրնար պարծիլ մեր բաժանման պարագլխաց դատողութիւնն ալ: Զուտ տոհմային ու չափաւոր զարգացման տէր մարդիկ, և յունարէն լեզուին անտեղեակ, անոնք բնաւ չէին տեսած ու կարողացած քաղկեդոնեան վարդապետութիւնը՝ զոր կը դատապարտէին: Սաստիկ ենթարկուած — անշուշտ անգիտակցաբար — նոյն ժողովի դիմակաւոր եւտիքական հակառակորդաց ազդեցութեան, որոնք բոյն դրած էին Պարսից և Ասորոց կողմերը, — ինչպէս իրաւամբ դիտեց նաեւ Սորմէն՝ — և որոնք՝ ըսինք՝ թէ նզովուած նոյն ժողովէն, կ'աշխատէին զայն նեստուրական ցուցնել, ազոնց բերանէն իսկ ուսան մերոնք՝ այլանշակուած ձեռով՝ քաղկեդոնեան դաւանութիւնը: Որպէս զի իմ այս տեսութիւնը ձրի չկարծուի, յառաջ կը բերեմ հաս մերոց զըչէն ելած համագումներն իսկ՝ զոր ունէին նոյն ժողովի մասին:

Բաժանողաց եռանդնազոյն գործիչը վերթանէս քերթող՝ այսպէս կ'ըսէ առ կիւրիոն թղթին մէջ. «Եւտ ճշմարիտ միաւորութեանն Տեսնո՞ւ երկուս բնութիւնս բաժանեալս և անջատեալս ի միմեանց սահմանեան ի վերայ միոյն Գրիստոսի»: Եւ առ Մովսէս՝ թէ «երկուս բնութիւնս աւելով անխառն և անհաղորդելիս՝ քստմենք ի անջատմամբ»<sup>1</sup>: Կատարեալ նեստուրականութիւնն է այս: Իւր փաստաբանը Քիչկան որդին՝ հետեծեալ կերպով կը ճառէ Սորմէնի. «Մերկ մարդոյ տայք գգրկական և զկենդանաբար չարչարանն, որում ոչ զոյ հնար ապրեցուցանել զոր: ... Եւ եթէ Աստուած խոստովանիք, յայտ է՝ եթէ

եկամոս և պիտակ համարիք զաստուածութիւնն և շնորհք ընկալեալս: ... Եւ այսպէս յայտաբար երկուս որդիս քարոզէք մի՝ բնութեամբ զԱստուածն Բանն, և միւսն՝ շնորհիս զ'ի Մարիամայ մարդն՝ և Դարձեալ նեստուրականութիւն: Եւ Արքա համ առ Կիւրիոն կը գրէ. «Ի Քաղկեդոնի ժողովեալն» հակառակ առաքելոցն և սուրբ ժողովոյն (Նիկիոյ) խոստովանեցին, երկուս բնութիւնս ասելով միոյն Գրիստոսի, խաբելով զպարզամիտս: և փոխանակ իրերորդութեանն՝ չորրորդորդեան քաղկեդոն. յաւելուն ներմարդութեան բնութիւն և որդոց երկակաց»<sup>2</sup>: Միշտ նոյն: Ու Լեոնի բերանը կը դնէ զայս. «Ազդէ կերպարան երկոցունց բնութեանց ընդ ընկերին շարայարութեամբ, միովն գործել զաստուածայինսն՝ որ ինչ Աստուծոյ վայելէ, իսկ միւսովն զմարդկայինսն՝ որ ինչ մարդոյ արժան է»<sup>3</sup>: ուր փոխանակ հեղինակին՝ իւր մտաց խառնակ պատկերը կու տայ մեզ:

Արդ՝ կը բաւէ համեմատել այս տեսութիւնքը վերև մեր կողմէ քաղկեդոնեան դաւանութեան հետ, համոզուելու համար՝ թէ ազոնք բողոքովին հակոտնեալ էին իւրարուս՝ Քաղկեդոնի կ'ուսուցանէ երկու բնութիւն անբաժան և անսեղատու, և մերոնք կ'ըսեն՝ քաժանեալս և անջատեալս, կամ անխառն և անհաղորդելիս: Նա կը մերժէ զանոնք՝ որ յերկուս որդիս քաժան են զԳրիստոս, և ասոնք՝ թէ երկուս որդիս քարոզէ. նա՞ զմի և զնոյն Գրիստոս որդի, տէր, միաժին կը դաւանի, իսկ ըստ մերոց՝ աստուածութիւնը կը համարի եւ կամոս և պիտակ և շնորհք ընկալեալ: Կարծել՝ թէ ազոնք կամաւ ըրին այս խեղաթիւրումը, զիրենք բարոյական շատ տխուր վիճակի մը մէջ ներկայացնել պիտի լինէր, աւելի քան որչափ են արդէն: Այլ կը կրկնեմ՝ թէ չարամիտ թելադրութեանց անգիտակից զոհերն եղան:

Աւելին կայ: կը մերժէին զլուսեղէս:

1. Տէր Միքէլ, 100. — 2. Բզմ. 291. — 3. Գր. բարոց, 138, 145. — 4. Անդ՝ 96. — 5. Անդ՝ 182. Ուրիւմ. 85

չունի «յաւելուն... երկակաց» — 6. Գր. բարոց, 182. Ուրիւմ. 85.

և անոր երկու կատաղի ու դատապարտեալ համախոհները՝ Դիոսկորոս ու Տիմոթէոս կուզէ՝ ճշդ ուղղափառ հովիւան և ընդ մարտիրոսաց՝ զասեցին ըստ Քերթողին՝, որովհետև Քաղկեդոնի դէմ ի նրապատ Եւտիքեան ճակատելու արժանիքն ունէին. որպէս թէ ինքն Եւտիքէս ալ չունենար նոյն արժանիքն առաւելագոյն չափով։ Եւ կուզին Հակաձառութիւնը հայիւրէն թարգմանեցին նոյն շրջանին, Եղիւ վարդեցւոյն օրով՝, զոր Վրթանէս տեղապահն ալ իւր քով ունէր՝ իբրև աղբիւր ճշմարտութեան և իմաստութեան, Այս կէտուս վրայ շեշտեցի, որպէս զի կասկած չթողում՝ թէ մեր հակաքաղկեդոնութեան հովը փշոզն եւտիքականութիւնն էր՝ զոր մերոնք չէին զգար իրենց շփոթութենէն. ու կ'ատէին իրենց դաւանակից Դ ժողովը, և կը մեծարէին հակադասան եւտիքականները։ Մերոց այս հոգեկան վիճակը լաւ ըմբռնած էր ժամանակակիցը՝ Յովհաննէս երուսաղեմացի, որ այսպէս կը գրէր. «Ոչ կարեն իմանալ գիտատ գրոց, և ըստ յառաջնեկով սովորութեան իւրեանց՝ զհարափառութիւն իբրև զբարեպաշտութիւն համարին»։ Իրենց նպատակը փարել էր ճշմարտութեան, զոր սակայն չէին գիտեր ուր փնտռել. և կը դիմէին հոն՝ ուսկից փախչելու էին։

7. Անոնց գլխաւոր յենակետերէն մին էր — ու Տիաց նաև հետագայից համար — ս. Կիրիլի սահմանը, «Մի թնորին Բաճի մարմնացիոյ»՝, զոր զբաւ Նեստորի դէմ։ Սակայն Աղեքսանդրիոյ հայրապետի այդ մին ու Քաղկեդոնի երկուքն իրարու հակառակ չէին բնաւ, — ինչպէս մերոնք կը կարծէին, ու զեռ կը կարծուի մինչև ցարդ մեր զիտնականագոյններէն, — ոչ առաւելագոյնս, և ոչ իմաստասիրաբար. այլ անոնց տարբերութիւնը լոկ լեզուական էր։ Բացատրեմ միտքս։ Քաջայայտ է՝ որ հին լեզուաց մէջ բառերու սահ-

մանները խստօրէն ճշդաւճ չէին, և անոնք շատ անգամ իրարու տեղ կը գործածուէին, Այսպէս նաև թնորին = *φύσις* թէ մեր և թէ Յունաց քով բազմանիշ էր, մերն անկասկած յունականին ազդեցութեան ներքև, և իսկութեան տառջին իմաստն զատ, զոր տեսանք վերև, յոյն բառագրոց մէջ, ինչպէս կ'. Ալեքսանդրի, կ'. Շենկլի և այլոց, կը մեկնուի նաև որ և է գոյակ, արարած մը։ Այս իմաստով Պետրոսի հայ թարգմանիչն ալ ըսաւ՝ թէ «թնորինք (στοιχεία = տարրեր) հըով կիւզեալ լուծցին»՝, այսինքն բնական էակները. և Եզնիկ՝ թէ «չէ մարթ յօղուածոյիցն ի միոյն պարզ թնորինն ունել զհաստատութիւնն, բանից յօղուածոյն ի պարզական թնորեանց յօղին»՝, որ է գոյացութիւններէ կամ գոյակներէ։

Արդ՝ թնորեան երկու իմաստներն ալ, որ ահա կային զեռ Ե դարուն մեր մէջ, որով հետեւաբար և Յունաց քով, ծանօթ էին կիրիլի, և երկուքն ալ գործածեց Քիրիստոսի մասին։ Առաջնոյն գեղեցիկ օրինակ մ'է առ Սուրենոս երկրորդ թղթին հետեւալ տեղը. «Թէպէտև մի ասիցի ի մէնջ միածին որդին Աստուծոյ մարմնացեալ և մարդացեալ, այլ ոչ վասն այսորիկ շփոթեցաւ, որպէս ինքեանք կարծեն. և ոչ ի մարմնոյ թնորին փոխեցաւ Բաճի բրնարին, և ոչ մարմնոյն ի միտքին. այլ երկարաճիտ մեալով յիրարմ թնական յատկորեան»։ Արդ՝ եթէ երկու բնութիւնց չշփոթուեցան իրարու հետ, իրարու շփոթուեցան, և պահեցին իրենց բնական յատկութիւնները, ապա յետ միութեան ևս ամբողջ մնացին. որով կիրիլի կ'ընդունէր անոնք երկուութիւնը։ Այս իմաստով Եկեղեցւոյ ուրիշ մեծ վարդապետ մ'ալ՝ Դրիգոր աստուածաբան՝ ըսաւ. «Զի թէպէտև թնորինք երկու՝ Աստուած և մարդ, զոր օրինակ և հոգի և մարմին, այլ ոչ

1. Գր. քրդոց, 94. — 2. Հմմտ. Հանգ. ամս. 1926, 442. — 3. Գր. քրդոց, 101, 108. — 4. Արտ. 1896,

252. — 5. Հմմտ. Գր. քրդոց, 94, 103. — 6. Բ Պեւ. Գր. 10. — 7. Եզնիկ՝ 32. — 8. Բ. Ա. 10, էջ 241,

երկու Որդիք, և ոչ Աստուածք, որպէս և ոչ աստ երկու մարդիկ՝ և Հետևաբար Կիրեղ «մի թնորիս Բանին մարմնացելոյ» բացատրութեան մէջ՝ թնորիսը գործածեց երկրորդ իմաստով, իմանալով մի էակ, մի ոք, մի անձն, ինչպէս յաճախ կ'ըսէ՝ «մի Քրիստոս, մի որդի, մի տէր»<sup>1</sup>։ ուր եթէ ընդհակառակն իսկութիւն հասկընար, անշփոթները շփոթուած, և կամ անոնց մին կորսուած ու մին մնացած պիտի լինէր։ Եւ այն ժամանակ խօսողը ս. Կիրեղը չէր լինէր, այլ Եւստիգէս, կամ մէկ բերանէ երկու հոգի պիտի խօսէին հաւասարաբար, Կիրեղ ու Եւստիգէս։

Քաղկեդոնի ժողովը նկատելով նեստորական ու եւտիքական ծայրայեղութիւնները, հարկաւոր համարեցաւ անձն (πρόεδρος) բառէն զատել թնորիսը (φύσις), վերջինս գործածելով իւր սեպհական զոյգ իմաստից առաջնով, — աշխարհիս ամենէն բնական բանը, — և ասով բացատրելով զայն՝ ինչ որ ի Քրիստոս կը կազմէին աստուածութիւնն ու մարդկութիւնը։ Սոյն գործով դաւանաբանական նորութիւն մը չէր ստեղծեր. այլ յօգուտ հարազատ վարդապետութեան՝ լեզուական ճշդում մը կ'ընէր, այն հատութեամբ ու հեղինակութեամբ՝ զոր ունէր իւր մայրենի բարբառին մէջ. ճշդում մը, որ յետ եւտիքականութեան երևման՝ կարևոր և անկասկած լաւագոյն էր քան Կիրեղի երկդիմի սահմանը։ Իսկ մեր անյունագէտ վարդապետները, որոց ընտանի չէր արևմտեան իմաստասիրութեան նորաշախիղ ասպարէզը, ոչ ալ գիտէին թնորիս բառնազանգան, իմաստները յունարենի ու հայերենի մէջ, և միանգամայն անբաւական էին ծանօթանալու անոր քաղկեդոնեան նշանակութեան, որ իրենց առջև փակ դուռ կը մնար, ասոր երկու թնորիսը հասկացան երկու անձինք, ու փարեցան Կիրեղի մի թնորիս, որ եթէ անշուստ էր նոյն վարդապետին օրով ու յետագայ

չարաչար բաժանման դէմ, եւտիքականութենէն վերջ վտանգաւոր եղաւ և դիրաւ շփոթելի վերջնոյս մոլորական մի թնորիս հետ։ որով Հայոց դաւանութիւնն ալ երկդիմի և կասկածելի կը դառնար յայս միւս քրիստոնէից։

Յ. Դ տիեզ. ժողովոյն իմաստուն կարգադրութենէն չօգտուեցան մերոնք. ոչ ալ կրցան խորհիլ՝ թէ վերջապէս Աղեքսանդրիոյ հայրապետը վեր չէր Ալեքսանդրէն, որոյ մէջ այնքան յստակ ու ստիպողական էր բնութեանց զանազանութիւնը. ոչ Եկեղեցւոյ միակ վարդապետը. ոչ աւելի բարձր հեղինակութիւն մը քան 600 եւ պիսկոպոսաց փառաւոր ժողով մը. ոչ պակաս ծանօթ և նուազ հասկանալի ու մեծարելի՝ հոն բազմող իրեն ցեղակից ու լեզուակից Հայոց բազմութեան՝ քան մեր անյունագէտ վարդապետաց. ոչ մեծագոյն քան զտիեզերական Եկեղեցին՝ որ ընդունեցաւ նոյն ժողովին սահմանը. ոչ աւելի մերձաւոր մեր ազգին՝ քան նոյն ժողովականը, որ իրենց արքունակութիւնը մեծարեց հայ եկեղեցին ինքնին՝ մինչև մեր այդ անգիտակից վարդապետները։ Ոչ, մեր բաժանողաց ընթացքին մէջ չենք յաշտողիւր գտնել որ և է արդարացուցիչ պարագայ։

Անոնք մոռցան նոյն իսկ Քրիստոսի Եկեղեցւոյն զաղափարն ալ. Եւ կաթողիկէ անսխալ Եկեղեցին, հաստատուած Պետրոսի վրայ, Զ դարու վերջերն ապրող մեր այդ քանի մը գիտնոց աչքին կը մոլորէ ծանրապէս մարդեղութեան խորհրդոյն կենսական վարդապետութեանը մէջ, Անոնց համար Քաղկեդոնի ժողովը պիտի չէր, ակօրհէ էր, անթոնալ էր<sup>2</sup>. որով անոր հետեւող բովանդակ քրիստոնէութիւնն ալ պղծեցաւ, անօրինեցաւ, անիծաւ, ու զատուեցաւ ի մարմնոյն Քրիստոսի՝ որ է Եկեղեցին<sup>3</sup>, որով և նոյն ինքն Քրիստոսն է։ Արդահամ բոլոր քաղկեդոնական ազ-

1. Ա. Կղեդոնիոս, Բղթ. Ա. անդ՝ 38, էջ 179. — 2. Անդ՝ 77, էջ 176, ևն. — Յ. Ուստ. Բ, 11. Գր.

գրոց, 94, 138, 177, 182. — 4. Եփես. Ե, 80, Կոզմ. Ա, 28,

գերը կը համարէր առանց վերապահու-  
թեան՝ «որոշեալ ի սրբոյ Եկեղեցոյ Աս-  
տուծոյ»<sup>1</sup>։ Ուրիշ բացատրութեամբ՝ տիե-  
զերական Եկեղեցին յանկարծակի կը փո-  
քըրկանայ կը կծկի կ'ամփոփուի Պարս-  
կահայաստանի նեղ սահմաններէն ներս,  
կղերական խմբակի մը և անոնց հետեողաց  
անձուկ շրջանակին մէջ, որ միայն կը մնայ՝  
ըստ իրենց բացատրութեան՝ «Հիմարիտ  
հոտ Գրիգորիոսի»<sup>2</sup>։ և միւս անսահման քը-  
րիստոնէութիւնն այլ ևս չի պատկանիր  
Յիսուսի, որ այդպէս՝ հակառակ իւր խոստ-  
ման՝<sup>3</sup> անկարող կը դառնար պաշտպանել  
իւր հիմնած և ուռնացուցած մեծ Եկեղեցին,  
և թոյլ կու տար՝ որ իւր փրկագործու-  
թեան խորհուրդը քայքայուէր եղծանէր,  
և դառնար յօգուտ բուռ մը Հայոց միայն  
ի՛նչ ցաւագար մտածութիւն մեր այդ բա-  
ժանողացը։

Գ. Պէտք է խոստովանինք սակայն, ի  
հեճուկս եւրոպացւոց մէջ տիրող կարծեաց  
ու մեր այդ բաժանողաց հակասական ըն-  
թացքին, թէ աղոնք եւտիքականներ չէին  
համոզմամբ։ Իրենց զրուածոց մէջ, որ  
հասած են մեզ, ուղղափառ վարդապե-  
տութիւնը միայն կը գտնենք Բանին մար-  
դեղութեան մասին։ Անոնք կը խոստո-  
վանէին զԳրիգորիոս կատարեալ Աստուած  
և կատարեալ մարդ, որոնք բնականապէս  
կը պահանջեն կրկին բնութիւններ ալ։  
Ուստի կ'ընդունէին անոնք քաղկեդոնեան  
դաւանութիւնն ըստ էութեան, թէպէտ ոչ  
ըստ տարին, և կը պատերազմէին ստուեր-  
ներու դէմ։ Կը գտնուէին այն հոգեբանա-  
կան վիճակին մէջ՝ զոր կը նկարագրէ  
առաքեալը. «Չնախանձ Աստուծոյ ունին,  
այլ ոչ գիտութեամբ»<sup>4</sup>։ Եւ ուր նախան-  
ձայուզութիւն ու տգիտութիւն կը միա-  
բանին, չկայ հանճար՝ որ կարենայ նուա-  
ճել զանոնք։ Որով ի զուր կը ջանար  
Վրաց լուսամիտ կաթողիկոսը Կիւրիոն  
ևս՝ բանալ իւր թղթերով անոնց աչքերը։  
Նշանաւոր է անոր հետեւեալ խօսքն ի

պատասխանի Աբրահամու հրաւիրին. «Հը-  
ռովմայ հայրապետն ի սրբոյն Պետրոսի  
աթոռն նստի, և աղեքսանդրացին՝ ի սըր-  
բոյ Մարկոսի աւետարանչի, և անտիո-  
քացին՝ ի սրբոյն Ղուկասու աւետարանչի,  
և Կոստանդնուպոլսեցին՝ ի սրբոյն Յով-  
հաննու աւետարանչի, և երուսաղեմացին՝  
ի սրբոյն Յակովբայ եղբորն Տեսնւ. Արդ՝  
զոր նոցա հաւատն կալեալ է և մեզ տու-  
եալ և մեր հարանցն, և մեր մինչև ցայժմ  
պահալ, այժմ գիւմրդ թողուցումը զայն  
և ձեզ հաւատասցուցը։ Եւ այլ եզրակոպո-  
սունք ուղղափառը՝ որոց համար չկայ,  
և թագաւորը և իշխանը և աշխարհը ա-  
մենայն ուղղափառը, զնոսա զամենեւեան  
գիւմրդ մարթի թողուլ և ընդ ձեզ միայն  
միաբանել»<sup>5</sup>։

Սակայն մերոնք չէին բմբռնէր այս հզօր  
պատճառարանութեան իմաստը՝ գահավի-  
ժէն խուսափելու համար։ Եւ յամառեցան  
մնացին, պահանջելով՝ որ համայն տիե-  
զերք քանի մը հայ կղերի անգիտակից  
համոզման առջև գային խոնարհչէին, ինչ-  
պէս յանդգնաբար կը գրէր Աբրահամ՝  
ըսելով. «Վասն որոյ և զյառաջագոյն  
սահմանն վարդապետացն մերոց, զոր ի  
վերայ Հռոմի՛ն հատին, (ակնարկութիւն  
Եղիվարդեցոյն ժողովին)՝, կացցէ մինչև  
ցրուն՝ թէ ոչ դարձցին ի Հիմարիտն»<sup>6</sup>։

Երազ կամ առասպել մը կը թուի այդ  
մարդոց խորհելու և գործելու եղանակը.  
մարդիկ՝ որ կը բաժնեն հայ եկեղեցին,  
հիմնելով այդ բաժանումն իրենց անբու-  
ժելի տգիտութեան վրայ։ Ոչ նոր, ոչ ալ  
զարմանալի է՝ որ իրենց աստիճանին ու  
պաշտօնին պահանջած գիտութենէն զուրկ  
կղերականներ գտնուին քրիստոնեայ ազ-  
գերու մէջ, թայց առանց տիրութեան  
չենք կարող նկատել՝ թէ ինչպէս զար-  
գացած ու մատենագրութեան տէր ազգ  
մը, որ կը պարծէր իւր Լուսաւորչնեքով  
ու Միաբոյրներով, կամ գէթ անոր ստուար  
մէկ մասը, կը խոնարհէր մերոց այդ տգի-

1. Բզմ. 296. — 2. Գր. բղբոց, 152. — 3. Բզմ.  
196. — 4. Հոսով. Ժ, 2. — 5. Գր. բղբոց, 179. —

6. Հմմ. Բզմ. 290. — 7. Գր. բղբոց, 194.

տուժեան առջև: Եւ Աւետարանը ձեռքը բռնած, և անդադար կարդալով հոն Որդի Աստուծոյ և Որդի մարդոյ, և Ոչ իմ կամք՝ այլ քոյոյ յիցիւն, պիտի շարունակէր զարբեր ու զարբեր դատաստեմունքները, որ ի Գրիգորիոս երկու բնութիւն և երկու կամք ուսուցներ էր: Ու մեր զգրչները պիտի խանգարէին հին վաւերագրերը, մեր ազգին ձեռքն աւելի բազմաթիւ ու զօրաւոր փաստեր տալու համար ժողովին վարդապետութեան դէմ: Եւ ի զարուս մէջ անգամ դեռ պիտի գտնուէին գիտուններ՝ որ ամբաստանէին զՎաղկիեղոն իբրեւ պատճառ

Հայոց բաժանման. որպէս թէ կարենար ժողով մը՝ գումարուելէն 140 տարի վերջ հերձուած գոյացնել. և կամ այնքան ժամանակ ուղղափառը յանկարծակի չարափառ դառնալ ու ստիպել զՀայս զատուելու կաթ. Եկեղեցիքէն: Պիտի շարունակէին այդ ամբաստանութիւնը, որպէս զի հաստատէին՝ թէ ո՞րքան յամար ենք մեր մեր աւանդական սխալ համոզումները սրբագրելու մէջ: Եւ մեր ազգին այս մտայնութիւնը՝ սահմանուած է անկասկած հոգեբանական անսովոր երեւոյթ մը մնալու քրիստոնէութեան պատմութեանը մէջ:

(Շարունակելի)

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

## ՆԻՒԹԵՐ ՊՈՒԼԿԱՐԱՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԵՐ ՀԱՅՔ Ի ՊՈՒԼԿԱՐԻԱ

ՍԿԻՋԲԵՆ ՄԻՆՁԵՆԻ 1700

Համառօտ «ակնարկ» մ'է գրութիւնս և կարելի է իբր կմախք գործածել ամբողջական ուսումնասիրութեան մը, որ իմ ունեցած պայմաններու տակ անկարելի էր:

Պուլկարը ծագմամբ հին չէ: Հայք անոնց ծագումէն առաջ իսկ գտնուած են անոնց՝ պուլկարներուն ներկայ հայրենի հողամասին վրայ: Իմ նպատակս պիտի ըլլայ հարեւանցի ակնարկով ուրուագծի մը տալ հնագոյն և սակայն քիչ ծանօթ այս գաղութի անցեալ փառքին և պատմութեան:

Առաջին անգամ՝ այս շրջանին մէջ, հայոց կը հանդիպինք, Բիզանդիոնի Լեոնի Ա. կայսեր (457–474) օրերուն և պարսից ձեռքէն փախըլ տական երկու հայ շառնուղներ են, որոնց սեռունդը յետոյ Հերակլ կայսեր օրով (620ին) փլիպիայէն (համալսարանային Զիւլիպէն = ֆիլիպպուլպոլիս) Արիւստուպոլիս (Կոստանթնուպոլիս) գործեցան. (Տ. Ռումելիի Հայոց պատմութիւնը — Զեւագիր Ա. Ապոյսանեան):

Յուստինիանոսի օրերուն ալ մեծ թիւով հայեր Հայաստանէն գաղթուեցան Բիզանդիոնի կայսրութեան հիւսիսային սահմաններուն վրայ և գործածուեցան վուճը և Աւար ցեղերուն դէմ իբր պատնէշ. Բիզանդիոնի թագակիրներուն համար սովորական էր տարբեր ցեղերու կտորներէն իրենց երկրին խլելով օտար երկիրներու վրայ բանակեցնել: Այսպէս թէ՛ հարկատու ժողովուրդները կը տկարանային և թէ՛ իրարու հանդէպ վարձկան գինուորի ոստիկանական դիրք

կը կատարէին: Պատմաբան Իրէնքը կը յիշէ արաբ և հայ գունդի մը Ֆիլիպպի մէջ իբր սահմանապահ գոյութիւն ունենալը. (Տեղեկագիր Ֆիլիպպի Գրասիրաց Եղբայրութեան Երեսնամեայ գործունէութեան, Պուլկարահայոց վրայ պատմական ակնարկով մը):

Յուստինիանոսի նման ըրաւ նաեւ Կոստանդին Ե. Կոբորնիմոս կայսրը (741–745) և հայազգի Թէոդորա Ա. կայսրուհին (850–867) որ մասնաւորաբար 853ին սկսաւ հալածել «Հայ Պողոսմիլ» կամ «Պոկոմիլ» կոչուած պաղիկեան աղանդաւորները, մասնաւոր մանկրեան կոչուածները, որոնք մեծ խումբերով բերաւ և թրակիա հաստատեց: Գուցէ բողոքականութեան ռահվիրայ այս առաջին քրիստոնէայ հերձուածը գրեթէ ամբողջութեամբ կը բաղկանար հայերէ, որոնց տոնով տեղով իրենց երկրէն տարագրել իրաւունք մասին պուլկար ծանօթ պատմագիր Dr. E. Tschella կ'ըսէ. «Երկար ժամանակ հալածելէ վերջ (853–856) վերջապէս ստիպուեցաւ (թէոդորա) Պուլկարիա գաղթել տալ (պաղիկեանները) որոնք միացին մինչեւ որ փէ դարուն կաթոլիկ եղան» Եւ արդարեւ ահա նոյն ուրոյն համայնք մը կը կազմեն դեռ մինչեւ հիմակ ալ, մեծամասնութեամբ կաթոլիկ (եթէ ոչ ամբողջութեամբ) և Ֆիլիպպի մէջ ծանօթ են իբր «բաւլիքեան»՝ իրենց թաղով, սովորութիւններով ևն: Խրոխտ և կործակ քրոնսէր այս համայնքը զարմանալի կերպով հայկական յատկանշիւր ունի. Dr. E. Tschella